ԿԵՆԴԱՆԻՔ

ԿԻԼԻԿԻՈՅ ԱՇԽԱՐՀԻՆ

Կիլիկիոյ արդի բնակիչներէն շատերն ունին իրենց առանձին ա-
ղօտատեղիք՝ բուսաբեր և ծաղկաւէտ դաշտաց և լերանց վրայ, ուր
երկար ամիսներ կը կենան։ Թէպէտև Մարտ ամսոյն մէջ կը սկը-
սին դալարանալ դաշտագետինք, սակայն հովիւք Ապրիլին կ'ելնեն
լերանց առաջին գահաւանդից վրայ, ուր մինչև ցկէս Յունիսին կե-
նալէն յետոյ՝ կ'ելնեն միջին գահաւանդից վրայ 7–8000 բարձրու-
թեամբ, իսկ Յուլիսին՝ աւելի ևս վեր։ Օդոատոսէն վերջը իջնելով լեռ-
ներէն՝ մինչև Հոկտեմբեր ամիսը գիւղերէից մօտ կը դեգերին. և ա-
պա 'ի ծովեզերս իջնելով կլիմային մեղմութեան պատճառաւ, ձմեռ
ատեն հոն կ'արածեն իրենց հօտերը։— Հովիւք մեծ շահ ունին ա-
նասնոց կաթէն և կոգիէն, գառանց և խոյից բուրդէն՝ որք շատ բազ-
մաթիւք են։

Ըստ պատմելոյ Թովմայի Բարունւոյ, որ չորեքտասաներորդ դա-
րուն մէջ ապրեցաւ, պիտանի կենդանեաց մէջ կը գտնուին, այծեաս-
մրև, վայրի մաքի, վիրք և վռ, գոմէշ, եղնիկ (Զև 1), պլատտան. այս
յիշեալ կենդանիքս ամենուն ալ ծանօթք են, բայց 'ի պլատտանէն, որ
եղնկին և այծեման հետ կը յիշուի, և թուի թէ տեղացիներէն եռ-
բուսմամբ կոչուած գորշագոյն այծեամն ըլլայ, որ Ասանայի դաշտաց
մէջ կը գտնուի։ Բայց աւելի հաւանական է թէ վայրի մաքին ըլլայ
այն, աւելի նման խոյի, զոր տեղացիք իսոյ կը կոչեն. կը զանազանի
սա խոյոց ուրիշ տեսակներէն իւր ճակատին լայնութեամբն և եղջ-
բաց մերձաւորութեամբն, արմատքն գրեթէ կից են գանկին։ Կիլիկիոյ
բարձր տեղեաց վրայ յաճախ կը տեսնուին վայրի քոշերն (Capra
aegagras), որք վեց ոտնաչափ երկայնութիւն ունին. գլուխնին մեծ
է, եղջիւրքն լայն են, ուղիղ և կորածայր. ագին և մօրուան սովորա-
կան այծից նման. մորթն և բուրդն գորշագոյն կամ պայծառ թխա-
գոյն։— Վիրն (Cervus Dama) Կիլիկիոյ լերանց վրայ և յամոյրն
(Gazelle) դաշտաց վրայ առատութեամբ կը գտնուին։ Հռովմայեցի
անուանի բնախօսն Պլինիոս՝ զարմանալի բան մը կը պատմէ այն տեղի
եղնիկներուն վրայ, թէ ծովուն բովանդակ տարածութիւնը՝ որ ընդ
մէջ ափանց Կիլիկիոյ և Կիպրոսի՝ լողալով կը կտրեն կ'անցնին, իւ-
բաքանչիւրն իւր գլուխը իրմէ նախընթացին գաւակին վրայ յեցնե-
լով. և հոտառութեամբ միայն կը գուշակեն ցամաքը և ոչ թէ տես-
սութեամբ։

Ընտանի անասնոց մէջ նախ նշանաւոր են կովերն, որոց տեսքն

digitised by A.R.A.R.@

թէպէտ այնքան գեղեցիկ չէ, և փոքր են, սակայն առատ կաթ կու տան և մեր մեր ին համեղ է։ Իսկ մաքիներն և խոյերն շատ ընտիր են, բրդոտ և մեծ գեմակոք, զոր հալեցնելով բնակիչքն՝ կերակրոց մէջ կոգւոյ տեղ կը գործածեն. ասոնք այժմ երկրին անուամբ Գալրա.

Նկ. 1. — Եղնիկ և Եղջիւր.

ման (Նկ 2) կը կոչուին։ Ասոնց բուրդն շատ պիտանի է, և տարուէ տարի մինչև 1000 կենդինար կը խուզեն. հիւսուածն թէպէտև նուրբ է, բայց մաքուր և զուտ չէ։ Բաց 'ի զգեստեղինաց ասով կը հիւսեն

digitised by A.R.A.R.@

նաև քիլիմ կոչուած կապերտները, որոնք շատ հռչակուած են Գարամանի անուամբ՝ նիւթոյն և բուսական ներկով շինուած գունագոյն զարդուց պատճառաւ։ Ուստի յոյն վաճառական մը այս կապերտնե-րէս մի քանին տանելով և դնելով 'ի ցոյց Վիեննայի արուեստահան-դէսին մէջ, մեծ պարգև ընդունեցաւ։— Եղնկաց ցեղէն շատ նշա-նաւոր են Ցօրոսի բարձր լերանց Մշկահոտ եղնիկներն, չորս ոտնա-չափ բարձր և անոստ եղջիւրներով։ Նուրբ ընտիր մորթով. թուի թէ մշկապորտ եղնկաց ցեղէն ըլլայ։ Զոր կը յիշէ Խորենացին Մեծ Հայոց հարաւային կողմանց մէջ։— Այժմանց հետ կրնանք դնել նաև ընտանի այծը՝ գեղեցիկ բուրդով, որ հին ժամանակները շատ ան-



Զկ. 2.— Խոյ Գարամանի.

ուանի էր. մեծ շահավաճառութեան նիւթ էր անոնց ցիսին, որ մինչև յիտալիա և ուրիշ աշխարհներ կը տարուէր։ Այս յիշեալ կենդանի-քը, ինչպէս նաև ոչխարն, ձին, ջորին և այլն, այնքան ընտիր և հռչակուած էին, որ յաճախ իբրև տուրք և պարգև կը տրուէին օ-տար թագաւորաց։

Վայրի գազանաց մէջ կը յիշուին բաց յայլոց՝ արջ և ինձ, ինչպէս նաև ընձառիւծ կամ յովազ, որոց կաշիէն կը շինուին աղուականաց համար հագուստ և թամբք։ Քանի մի ճանապարհորդք կը համարին թէ ուռիւծ ևս գտնուի Ամանոսեան լերանց մէջ. իսկ վարազ, յուսա-մրն, բորենի (Զկ 3) և այլն, յաճախ կը տեսնուին լերանց մէջ։ Նոյն-պէս առատութեամբ կը գտնուին որսական կենդանիք, եղնիկ, վիթ,

digitised by A.R.A.R.@

պլատան, և այլն, որք խմբովին կը պտրտին եղջերենեաց և թփոց մէջ։— Թռչունքն անթիւ են, որոց մէջ յանուանէ կը յիշատակէ մեր թումման Բաքունին նաև զսիյամարգ, որ հիմակ չգտնուիր. կարելի է, թէ չփոխած ըլլայ փասիանին (Զև 4) հետ՝ որ ծանօթ է արդ և յաճախ կը տեսնուի։ Վայրենի թռչնոց մէջ ծանօթ են՝ բու, արտոռի, բազէ, և լերկ պարանոցով անգղն, որ Ալպեան լերանց գառն-



Զև 3.— Բորենի

Զև 4.— Փասիան

որսակ (Lammergeyer) կոչուած անգղէն աւելի մեծ է։— Ոսկնոց կարգէն բաց 'ի սովորական օձերէն՝ Ասպիս կոչուածն շատ կը զբաղուի դաշտակողմանց վրայ։

Գետոց մէջ զարմանալի առատութիւն մը կը տեսնուի ձկանց, ինչպէս կը պատմէ Վիլլեպրանտ, զոր որսալով բնակիչքն կ'ապրուտեն։ Նոյնպէս շատ առատ են միջատներն և թիթեռնիկքն, յորոց հաւաքում մ'ընելով Քոչի բնախօսն, շատ նորանոր տեսակներ գտաւ անոնց մէջ։

digitised by A.R.A.R.@